600.0109.16.09.04

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

16 սեպտեմբերի 2004 թվականի №109Ն
ք. Երևան

## ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի է) կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է**.

1. Հաստատել՝

   ա) էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի՝ 10ՄՎտ և ավելի տեղակայված հզորություն ունեցող արտադրող-բաշխող պայմանագրի օրինակելի ձևը (հավելված N1).

   բ) էլեկտրաէներգիայի առուվաճառքի՝ մինչև 10ՄՎտ տեղակայված հզորություն ունեցող արտադրող /փոքր հիդրոէլեկտրակայաններ/-բաշխող պայմանագրի օրինակելի ձևը (հավելված N2).

   գ) հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման՝ բաշխող-հաշվարկային կենտրոն պայմանագրի օրինակելի ձևը (հավելված N3).

   դ) էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման՝ բաշխող-համակարգի օպերատոր պայմանագրի օրինակելի ձևը (հավելված N4).

   ե) էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման՝ բաշխող-հաղորդող պայմանագրի օրինակելի ձևը (հավելված N5):

2. Էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված անձանց՝ մինչև սույն թվականի սեպտեմբերի 30-ը կնքել սույն որոշման 1-ին կետով հաստատված պայմանագրերի օրինակելի ձևերին համապատասխան պայմանագրեր և ներկայացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գրանցմանը:
3. Սահմանել, որ սույն որոշման 2-րդ կետին համապատասխան կնքված պայմանագրերն ուժի մեջ են մտնում սույն թվականի հոկտեմբերի 1-ից:
4. Ընդունել ի գիտություն, որ մինչև սույն թվականի սեպտեմբերի 30-ը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց հետ կքննարկվի և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նիստի քննարկմանը կներկայացվի էլեկտրաէներգետիկական շուկային վերաբերող առաջնահերթ փաստաթղթերի ընդունման վերաբերյալ ժամանակացույցը:
5. Ուժը կորցրած ճանաչել՝

   ա) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի դեկտեմբերի 28-ի «Էլեկտրական էներգիայի առուվաճառքի պայմանագրերի օրինակելի ձևերի հաստատման մասին» N37 որոշումը.

   բ) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի ապրիլի 10-ի «Երկդրույք սակագնային համակարգում էլեկտրական էներգիայի առուվաճառքի պայմանագրերի օրինակելի ձևը հաստատելու և ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի դեկտեմբերի 29-ի N31 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N14 որոշումը.

   գ) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի մայիսի 23-ի «ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի ապրիլի 10-ի N14 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N20 որոշումը.

   դ) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի հունիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության

էներգետիկայի հանձնաժողովի 1998 թվականի սեպտեմբերի 11-ի N44 և 1999 թվականի դեկտեմբերի 28-ի N37 որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N29 որոշման 2-րդ կետը.

ե) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի հունիսի 26-ի «Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության (մեծածախ գնորդ(վաճառող)-հաղորդող) պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» N32 որոշումը.

զ) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի օգոստոսի 10-ի «ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի ապրիլի 10-ի N14, հունիսի 19-ի N28 և N29 որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին» N35 որոշման 1-ին և 2-րդ կետերը.

է) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի սեպտեմբերի 25-ի «ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի հունիսի 26-ի N32 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N41 որոշումը.

ը) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հունվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի կառուցվածքի բարեփոխման մասին» N3 որոշումը.

թ) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի փետրվարի 22-ի «Հայաստանի էլեկտրաէներգետիկական մեծածախ պարտադիր միացյալ շուկայի կառուցվածքը և գործառույթները հաստատելու մասին» N10 որոշումը.

ժ) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հոկտեմբերի 2-ի «ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2001 թվականի ապրիլի 10-ի N14 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N63Ն որոշումը.

ժա) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հոկտեմբերի 31-ի «Էլեկտրաէներգիայի

առուվաճառքի (մեծածախ գնորդ(վաճառող)-բաշխող) պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» N78Ն որոշումը.

ժբ) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի դեկտեմբերի 24-ի «Հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը և էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգը հաստատելու մասին» N92Ն որոշման 1-ին կետը.

ժգ) Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003 թվականի հոկտեմբերի 22-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» N71Ն որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և գործում է մինչև 2005 թվականի հունվարի 1-ը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք.Երևան
16 սեպտեմբերի 2004թ.